Հովհաննես Թումանյան

Վերջին օրը

Եփրատի ափին դեմուդեմ եկած՝
Ջարկվում էին խիստ, զարկվում ու զարկում
Աննահանջ ու քաջ խրմբերը հայի
Եվ քուրդն ու թուրքը կիտված արենխում:

Երբ որ հոգնեցին երկար զարկվելուց,
Երբ որ հոգնեցին բազուկները կուռ,
«Հե՛յ, ընկե՛ր, ասավ խրմբապետն արի,
Հե՛յ, ընկե՛ր, ասավ, բարձրացի՛ր շուտով,
Բարձրացի՛ր Հայոց բարձրը լեռների

Ամենից բարձրը գագաթն ու նայի՛ր,
Որտե՞ղ է, մի տե՛ս, վերջը թըշնամու...»
Բարձրացավ ջըլուտ հայդուկը հայի,
Բարձրացավ բարձրը գագաթը լեռան
Ու հոգնած ձեռքը դըրեց ճակատին.

«Խրմբապե՛տ, ասավ, ընկեր խրմբապետ,
Տեսնում եմ հեռու հորիզոնները մութ
Եփրատի դալար հովիտներն ի վար՝
Մինչև Տավրոսի լեռները կապուտ,
Մինչև մըշուշոտ պարը Պոնտոսի,

Մինչև բարձրաբերձ ժայռերը Մոկաց . . .
Ծուխ է բարձրանում Մուշի հովիտից,
Ծուխ է բարձրանում Սասմա սարերից,
Ծուխ է բարձրանում Վանա կողմերից,
Ծուխ է բարձրանում Աբաղա դաշտից,

Կըրակ է կանգնած Զեյթունի վըրա...
Ամեն կողմերից թըշնամին գունդ-գունդ
Շարժվում է մեր դեմ, ու չի երևում,
Չեմ տեսնում վերջը նըրա շարքերի...»
«Հե՛յ, ընկե՛ր, ասավ խըմբապետն այնժամ,

Հե՛յ, ընկե՛ր, ասավ, ետ նայիր հապա,
Ետ նայի՛ր, մի տե՛ս, հայերը հեռվից
Չե՞ն գալիս արդյոք մեզի օգնության...»
Ու հոգնած ձեռքը դըրեց ճակատին,
Կըտրիճ հայդուկը նայեց դեպի ետ.

— «Խըմբապե՛տ, ասավ, ընկեր խըմբապետ,
Տեսնում եմ ահա, ինչպես ափիս մեջ,
Սև ծովից մինչև ծովը Վըրկանա,
Մինչև Կովկասի պատնեշը ձյունոտ.
Գալիս են խումբ-խումբ հայերը ճեպով,

Գալիս են ճեպով մեզի օգնության:
Իջնում են Սյունյաց մութ-մութ սարերից,
Ելնում Գուգարքի խոր-խոր ձորերից,
Շիրակի դաշտից մինչև Այրարատ,
Ու ողջ ափերը Անուշ Արաքսի

Անվերջ տագնապով իրար են անցնում...
Գալիս են ամեն կողմից Կովկասի,
Գալիս են հեռո՛ւ, հեռու կողմերից,
Գալիս են կարոտ պանդուխտներն ամեն,

Գալիս են ցրված տրղերքը նորից,

Գալիս են՝ պարզած դրրոշն հայրենի...»
«Հե՛յ, ընկե՛ր, ասավ խրմբապետը փորձ,
Հե՛յ, ընկե՛ր, ասավ, սուր աչք ունիս դու,
Նայի՛ր դեպ հյուսիս, ավելի հեռու,
Չի՞ շարժվում արդյոք հյուսիսը հրզոր...»

Ու նայեց հայդուկն ավելի հեռու,
Նայեց սրրատես աչքով արծվենի:
«Խրմբապե՛տ, ասավ, ընկեր խրմբապետ,
Աչքրս չի կրտրում՝ որտեղից մինչ ուր՝
Շարժվում է, ահա, հյուսիսն ընդհանուր.

Հորձանք է տալիս ծովն ռռուսական,
Հորձանք է տալիս ծանր ու ահավոր,
Դեպի ամեն կողմ ափերն հեռավոր.
Եվ, հուր ու շոգի շընչելով ուժգին,
Գրնացքը կրտրած գրնացքի ետև,

Ու, գալարվելով հովիտից հովիտ,
Գալիս են, ինչպես վիշապներ սև-սև...»
«Հե՛յ, ընկե՛ր, կանչեց խրմբապետն արի,
Հե՛յ, ընկե՛ր, կանչեց, դե՛ ցած եկ արագ,
Առ հրրացանրդ, դաշտն իջիր շուտով,

Իջի՛ր Սրրբազան ափը Եփրատի.
Հին պատերազմի վերջին զարկն է սա,
Հին ոճրագործի հոգեվարքն է սա...»
«Խրմբապե՛տ, կանչեց, ընկեր խրմբապետ,
Խրմբապե՛տ, կանչեց հայդուկը ջահել,

Հայոց երկնահաս լեռների վրրա
Խո՛ր, խորհրդավոր ձայներ են լսվում.

Դղղրդում է խուլ երկինքը վերից
Էն անհուն, անքուն, անթիվ ձայներից...»
«Հե՛յ, ընկե՛ր, կանչեց խրմբապետը հին,

Հե՛յ, ընկե՛ր, կանչեց, խաչ հա՛ն երեսիդ.
Էդ կյանքում տանջված, տանջանքով մեռած
Անթիվ, անհամար, անբախտ հայերի
Հոգիներն են հեգ, որ լաց ու կոծով,
Արյան մրրրիկով երկինք վերացան:

Փոթորկում են դեռ աստծու առաջին,
Բողոքում անհուն երկրնքովը մին.
Ներանց բողոքի աղմուկն է անլուռ,
Հասնում է ներքև՝ հայի ականջին...
Հե՛յ, ընկե՛ր, ասավ, խաչ հա՛ն երեսիդ,

Առ հրրացանրդ, դաշտն իջիր շուտով,
Իջի՛ր Սրրբազան ափը Եփրատի,
Մեծ տառապանքի վերջին օրն է սա...»

1915